նով պարգևատրելու մասին։ Դահլիճում բռնկում են բուռն ծափահարություններ։ Բոլորը ոտքի են կանգնում։

Օվացիան նոր ուժով բռնկեց, երբ ընկեր Լ. Ի. Բրեժնևը Լենինի շքանշանն ամրացրեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի դրոշին։

Այնուհետև ընկեր Լ. Ի. Բրեժնևը երկարատև ծափահարությունների ներքո հանդիսավոր նիստի նախագահությանը հանձնեց ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության, ՍՍՀՄ Մինիստրների սովետի ողջույնի տեքստը՝ ուղղված Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության գիտությունների ակադեմիային, գիտնականներին, սովետական գիտության բոլոր աշխատողներին)։

(Ընկեր Լ. Ի. Բրեժնևի ճառը լսվեց հսկայական ուշադրությամբ և բազմիցս ընդհատվում էր բուռն, երկարատև ծափահարություններով)։

Ընկեր Լ. Ի. Բրեժնևի ճառը հանդիսավոր նիստի մասնակիցները լսեցին հսկայական ուշադրությամբ։ Այդ ճառը խորին հետաքրքրությամբ ընկալեցին միլիոնավոր մարդիկ մեր երկրում և աշխարհի շատ պետություններում։ Լեոնիդ Իլյիչի ճառը հաղորդվում էր կենտրոնական հեռուստատեսությամբ, «Ինտերվիդենիե», «Օրբիտա», «Վոստոկ» սիստեմներով։

Ապա «ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250 տարին» զեկուցումով հանդես եկավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնակատար, ակադեմիկոս Վ. Ա. Կոտելնիկովը։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Ա. ԿՈՏԵԼՆԻԿՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Թույլ տվեք, թանկագին Լեոնիդ Իլյիչ, այս դահլիճում բոլոր ներկա գտնվողների անունից Ձեզ ամբողջ սրտով ջերմ շնորհակալություն հայտնել սովետական գիտնականներին հղված ողջույնի ջերմ խոսքերի համար, նրանց աշխատանքը, ինչպես նաև մեր մեծ հայրենիքի առաջադիմության գործում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ներդրած ավանդը բարձր գնահատելու համար։ Ձեր փայլուն, խորիմաստ ճառը գիտնականների բազմահազարանոց բանակին նոր ստեղծագործական հաջողությունների է ոգեշնչում հետազոտությունների զարգացման գործում, կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ գիտության կապի հետագա ամրապնդման ասպարեզում։

Համոզված եմ, որ արտահայտած կլինեմ ոչ միայն այս հանդիսավոր ժամին այստեղ հավաքված գիտնականների, այլև Սովետական Միության գիտության բոլոր աշխատողների ընդհանուր և միահամուռ զղացումը, եթե ասեմ, որ մենք բախտավոր ենք մեր մեծ երկրում ապրելու համար, որտեղ գիտությանը հատկացված է այդքան պատասխանատու ու պատվավոր դեր, որտեղ այսքան բարձր է գնահատվում գիտության աշխատողների վաստակը։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի և ակադեմիայի գիտնականների ու աշխատակիցների ամբողջ կոլեկտիվի անունից զեկուցողը ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, սովետական կառավարությանը, սրտաբուխ շնորհակալություն հայտնեց ակադեմիային հասցեագրված ջերմ ողջույնի, նրա գործունեության բարձր գնահատականի համար, ակադեմիան Լենինի երկրորդ շքանշանով պարգևատրելու և ակադեմիայի աշխատողների մի մեծ կոլեկտիվի շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու համար։ Մենք, ասաց հռետորը, այդ բարձր պարգևները ընկալում ենք որպես ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի, սովետական գիտու-

թյան նկատմամբ կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության մշտական հոգատարության մի նոր վառ դրսևորում, որպես ակադեմիայի նվաճումների համաժողովրդական ճանաչման արտահայտություն։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անունից նա կուսակցությանն ու կառավարությանը հավաստիացրեց, որ ակադեմիայի գիտնականներն ու աշխատակիցները իրենց բոլոր ուժերը, գիտելիքները և ընդունակությունները կգործադրեն որպեսզի պատվով արդարացնեն հայրենիքի բարձր վստահությունն ու հոգատարությունը, հասնեն գիտական նոր նվաճումների, ակտիվորեն աջակցեն մեր երկրում գիտատեխնիկական և սոցիալական առաջադիմության հետագա արագացմանը։

Այսուհետև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի դրոշի վրա շողալու են Լենինի երկու շքանշաններ։ Այդ պարգևները ակադեմիայի համար առանձնահատուկ նշանակություն ունեն։

Կոմունիստական կուսակցության և սովետական պետության հիմնադիր, գիտության կորիֆեյ Վլադիմիր Իլյիչ Լենինի անվան հետ է կապված ակադեմիայի պատմության մեջ կատարված արմատական շրջադարձը, որը տեղի ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո։ Գիտության պատմության մեջ առհավետ կպահպանվի այն փաստը, որ սովետական հանրապետության արդեն առաջին, նրա համար ամենադժվարին տարիներին կուսակցությունն ու սովետական կառավարությունը, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, բոլոր միջոցները ձեռնարկեցին երկրում գիտական հետազոտությունների արագ զարգացման համար։

Սովետական իշխանության օրոք ակադեմիան անճանաչելիորեն փոխվել է։ Նախքան մեծ Հոկտեմբերը այն գիտնականների մի սակավաթիվ կոլեկտիվ էր։ Այն ժամանակ ակադեմիան ուներ ընդամենը ոչ մեծ մի ինստիտուտ, մի քանի աստղադիտարան, լաբորատորիա ու թանգարան։ Նրա կազմում 300 մարդ էլ չկար։

Նախքան հեղափոխությունը գիտությունների ակադեմիայի ծայրահեղ համեստ միջոցները բնավ չեն կարող համեմատվել Սովետական Միությունում գիտությանը հատկացվող միջոցների հետ։

Ներկայումս Սովետական Միության գիտությունների ակադեմիան ֆունդամենտալ գիտության խոշորագույն կենտրոնն է աշխարհում, որն ունի գիտահետազոտական ինստիտուտների լայն ցանց։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի կազմում կա մոտավորապես 250 գիտական հիմնարկություն։ Ակադեմիայում աշխատում է ավելի քան 160 հազար մարդ, այդ թվում ավելի քան 40 հազար բարձրորակ գիտական աշխատող։ Նյութատեխնիկական հարուստ բազան ակադեմիային հնարավորություն է տալիս լուծել մեծ և բարդ գիտական պրոբլեմներ։

Հիշեցնելով, որ Ռուսաստանում գիտությունների ակադեմիայի առաջին հանդիսավոր ժողովը տեղի է ունեցել 1725 թվականի դեկտեմբերի 27-ին (հին տոմարով), զեկուցողը նշեց, որ այդ պահից ի վեր ակադեմիան պատմական մեծ ուղի է անցել։

Գոյության առաջին իսկ տարիներից Ռուսաստանի գիտությունների ակադեմիայում զարգացել և նշանակալի գիտական արդյունքներ են տվել մաթեմատիկայի, մեխանիկայի, տեսական ու էքսպերիմենտալ ֆիզիկայի, աստղագիտության, աշխարհագրության, երկրաբանության ու անատոմիայի բնագա-

վառի հետազոտությունները։ Ստեղծվել են պատմական, աղդագրական աշխատություններ։

1742 թվականից գիտությունների ակադեմիայում սկսում է աշխատել Միխայիլ Վասիլևիչ Լոմոնոսովը։ Նրա ակնառու և բազմակողմանի գործունեությունը հսկայական նշանակություն ունեցավ հայրենական ու համաշխարհային գիտության զարդացման համար։

18-րդ դարի երկրորդ կեսին ակադեմիային զուգընթաց և նրա գիտնականների ակտիվ մասնակցությամբ Ռուսաստանում սկսում են երևան գալ կրթության ու գիտության նոր կենտրոններ։ 1755 թվականին հիմնադրվում է Մոսկվայի համալսարանը, որն այժմ կրում է Լոմոնոսովի անունը, իսկ 19-րդ դարի սկզբին՝ մի շարք ուրիշ համալսարաններ ու բարձրագույն ուսումնական հաստատություններ։

Այդ ժամանակամիջոցում ակադեմիայում և համալսարաններում բեղմնավոր աշխատանք էին տանում խոշորագույն գիտնականները, որոնք շատ արժեքավոր ավանդ են ներդրել համաշխարհային գիտության մեջ։ Մարդկությունը երբեք չի մոռանա ռուս մեծ մաթեմատիկոսներ Լոբաչևսկու, Չեբիշևի, Լյապունովի, Մարկովի, ֆիզիկոսներ Լեբեդևի ու Պոպովի, բյուրեղագետ Ֆյոդորովի, քիմիկոսներ Բուտլերովի ու Մենդելևևի, կենսաբաններ Բերի, Մեչնիկովի, Սեչենովի, Պավլովի, երկրաբաններ Կարպինսկու և Վերնադսկու անունները։

19-րդ դարում և առանձնապես 20-րդ դարի սկզբին Ռուսաստանում զարդացած հեղափոխական-դեմոկրատական, իսկ ապա՝ մարքս-լենինյան հասարակական միտքը իր ազդեցությունը գործեց հայրենական մտավորականության առաջադեմ ներկայացուցիչների վրա։ Համալսարանների դեմոկրատ ուսանողությունը, առաջադեմ պրոֆեսորները ու դասախոսները ակտիվորեն մասնակցում էին հեղափոխական շարժմանը։

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, այնուհետև ասաց Վ. Ա. Կոտելնիկովը, հիմնիվեր փոխեց մեր երկրի կյանքը, նոր դարաշրջան բաց արեց մարդկության պատմության մեջ։ Հասարակական ու պետական զարդացման հիմքում առաջին անդամ դրվեց իրոք գիտական տեսություն՝ մարքս-լենինյան հեղափոխական ուսմունքը։ Գիտությունը սկսեց դիտվել որպես հասարակության վերափոխման կարևորագույն գործոն։

1918 թվականի ապրիլին իր հռչակավոր «Գիտա-տեխնիկական աշխատանքների պլանի ուրվագծում» Վ. Ի. Լենինը գիտությունների ակադեմիայի առջև խնդիր դրեց զարդացնել արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման, ժողովրդական տնտեսությունը հանքային հումքով ապահովելու, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էլեկտրիֆիկացման հետ առնչված պրոբլեմների հետազոտությունները։ Լենինի դաղափարները խոր հետք թողեցին գիտությունների ակադեմիայի հետագա գործունեության և ամբողջ սովետական գիտության զարդացման վրա։

1925 թվականին, ՍՍՀՄ կառավարության որոշմամբ, ակադեմիան ճանաչվեց որպես «Բարձրագույն համամիութենական գիտական հիմնարկություն» և ստացավ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության գիտությունների ակադեմիա անվանումը։

Առաջին հնդամյակների տարիներին ժողովրդական տնտեսության վերելքի շնորհիվ սովետական գիտությունը ստացավ նյութատեխնիկական հզոր

բազա։ Բուռն կերպով աճեց և ընդլայնվեց ակադեմիայի հիմնարկությունների ցանցը։

Սոցիալիստական շինարարության կարևորագույն խնդիրների լուծմանը էլ ավելի մոտեցնելու և կենտրոնական պետական հիմնարկությունների ու կերատեսչությունների հետ լավագույն կոնտակտ հաստատելու նպատակով 1934 թվականին ակադեմիան Լենինգրադից փոխադրվեց Մոսկվա։ Մայրաքաղաք փոխադրվեցին գիտությունների ակադեմիայի մի շարք գիտական հիմնարկություններ և նախագահությունը։

Հասարակական գիտությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ 1936 թվականին բարձրագույն կոմունիստական ակադեմիայի նախկին ինստիտուտների հանձնումը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի տնօրինությանը։

Այդ ժամանակամիջոցում գիտնականները ակտիվորեն մասնակցում են ժողովրդական տնտեսության զարգացման պլանների մշակմանն ու կենսագործմանը, անմիջական կապեր են հաստատում արտադրական ձեռնարկությունների և կառույցների հետ։

Այս ամենը հնարավորություն տվեց լայնորեն ծավալելու գիտական հետազոտությունները և հասնելու նոր, խոշոր արդյունքների, որոնք նպաստեցին երկրի ինդուստրացմանը և արդյունաբերության ապահովմանը հանքային հումքով, գյուղատնտեսության վերելքին ու նրա կոլեկտիվացմանը։ Գիտության արագ զարգացումը սովետական ժողովրդին հնարավորություն ընձեռեց հետամնաց երկիրը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, դարձնելու առաջավոր, օգնեց ստեղծելու այնպիսի բազա, որը հնարավորություն տվեց հաղթանակ տանելու Հայրենական մեծ պատերազմում։

Պատերազմի տարիներին, շարունակեց հռետորը, գիտնականների և կոնստրուկտորների ջանքերով ստեղծվեցին նոր, այն ժամանակվա համար առավել արդիական մարտական ինքնաթիռներ, տանկեր ու հրանոթներ, արմատական կատարելագործումներ կատարվեցին ռազմական արդյունաբերության արտադրության տեխնոլոգիայի մեջ, որոնք թույլ տվեցին տնտեսել նյութերը և էականորեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։ Գիտությունների ակադեմիան մեծ ուշադրություն էր նվիրում մեր արևելյան շրջաններում նոր բնական ռեսուրսների որոնմանն ու յուրացմանը։ Դրա շնորհիվ պատերազմի տարիներին, երբ մի շարք մարզեր օկուպացված էին, երկիրը ապահովվեց հանքային հումքով։ Ակադեմիան օգնում էր նաև լուծել այլ պրոբլեմներ։

Եռապատերազմյան առաջին տարիներից նոր փուլ սկսվեց սովետական գիտության ու տեխնիկայի զարգացման մեջ, գիտությունների ակադեմիայի պատմության մեջ։ Մեր կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունը ապահովեց ժողովրդական տնտեսության վերելքը, կրթության ու կուլտուրայի աճը միութենական հանրապետություններում, գիտության լայն զարգացումը ամբողջ երկրի մասշտաբով։ Մինչև 60-ական թվականների սկիզբը արդեն բոլոր միութենական հանրապետություններում ստեղծվել էին գիտությունների ակադեմիաները։

Շարունակվում էր գիտական հիմնարկությունների ինտենսիվ զարգացումը նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի կազմում։ 1957 թվականին սկսվեց նրա Սիբիրի բաժանմունքի կազմակերպումը, որը հետագա տարինե-

րին դարձավ խոշորագույն գիտական կենտրոն։ Մասնագիտացված գիտական կենտրոններ են ստեղծված Մոսկվայի մարզում՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության հրատապ պրոբլեմների ուսումնասիրությունների համար, կազմակերպվեցին Ուրալի և Հեռավոր Արևելքի գիտական կենտրոնները։

Երկրում նաև լայն զարգացում են ստացել մինիստրությունների ճյուղային գիտահետազոտական ինստիտուտները, ճյուղային ակադեմիաները՝ Վ. Ի. Լենինի անվան գյուղատնտեսական գիտությունների համամիութենական ակադեմիան, բժշկական գիտությունների ակադեմիան, մանկավարժական գիտությունների ակադեմիան։

Ետպատերազմյան ժամանակաշրջանում, ինչպես նաև նախընթաց տարիներին սովետական գիտության առաջընթացը կանխորոշվել է մեր կուսակցության քաղաքականությամբ, որը նպատակամղված է գիտական հետազոտությունների համակողմանի զարգացմանը, սոցիալիստական շինարարության մեջ գիտության լայն օգտագործմանը։ ՍՄԿԿ XXII համագումարում ընդունված կուսակցության ծրագրի մեջ ասված է. «Գիտության կիրառումը դառնում է հասարակության արտադրողական ուժերի հուժկու աճի վճռական գործոնը։ Գիտության զարգացումը և ժողովրդական տնտեսության մեջ նրա նվաճումների արմատավորումը այսուհետև ևս կլինի կուսակցության հատուկ հոգատարության առարկան»։

Այնուհետև Վ. Ա. Կոտելնիկովը կանգ առավ վերջին ժամանակաշրջանում բնական և հասարակական գիտությունների բնագավառում երկրի գիտնականների կատարած ֆունդամենտալ հետազոտությունների մի քանի առավել կարևոր արդյունքների վրա։

Սովետական մաթեմատիկական դպրոցները այժմ առաջավոր դիրքեր են գրավում մի ամբողջ շարք հարցերում։ Մեծ նվաճումներ կան մաթեմատիկայի ինչպես դասական, այնպես էլ նոր բաժիններում, մասնավորապես հաշվողական մաթեմատիկայի բնագավառում, որը կապված է էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ստեղծման ու մաթեմատիկական ապահովման հետ, ինչպես նաև, այսպես կոչված, դիսկրետային մաթեմատիկայի հետ։

Մեր գիտնականների հետազոտություններով հարստացել են ժամանակակից ֆիզիկայի շատ ուղղություններ։ Գիտական ուժերի և նյութական ռեսուրսների կենտրոնացումը սովետական գիտությանն ու տեխնիկային հնարավորություն ընձեռեց կարճ ժամանակամիջոցում լուծել ատոմային էներգիայի պրոբլեմը։ Մեզանում դրվեց ատոմային էլեկտրակայանների կառուցման սկիզբը, որոնք այժմ մեծ նշանակություն ունեն երկրի էներգետիկայի մեջ։

Այս պրոբլեմի լուծման գործում հսկայական վաստակ ունեն մի շարք ականավոր սովետական գիտնականներ՝ ակադեմիկոս Կուրչատովի գլխավորությամբ։

Մեր երկրում ստեղծված խոշորագույն արագացուցիչների օգնությամբ կատարված հետազոտությունները հնարավորություն ընձեռեցին էապես առաջ գնալ բարձր էներգիաների դեպքում տարրային մասնիկների կառուցվածքի և փոխգործողությունների ըմբռնման ճանապարհին։ Սովետական գիտնականները առաջավոր դիրքեր են գրավում կառավարվող ջերմամիջուկային սինթեզի և մագնիսահիդրոդինամիկ գեներատորների պրոբլեմների մշակման ասպարեզում։

Նշանակալի նվաճումներ կան պինդ մարմնի տեսության զարգացման, պինդ մարմինների մեջ էլեկտրական ու մագնիսային երևույթների, գերհաղորդականության, բյուրեղավանդակի իրական կառուցվածքի և արատների ուսումնասիրության, կիսահաղորդիչների տեսության զարգացման ասպարեզում։

Խոշոր նվաճումներ են ձեռք բերվել քիմիական գիտության բնագավառում։ Մշակվել են ֆիզիկական արժեքավոր հատկություններով օժտված անօրգանական նոր նյութերի ստացման գիտական հիմունքները, որը վճռական նշանակություն ունեցավ նոր տեխնիկայի համար։ Ֆիզիկա-քիմիական տարրալուծման՝ մեր երկրում ստեղծված մեթոդները հնարավորություն ընձեռեցին զգալիորեն կատարելագործելու հանքային հումքի բազմաթիվ տեսակների վերամշակման և պարարտանյութերի արտադրության տեխնոլոգիական սխեմաները։ Սովետական գիտնականները առաջարկել են մետաղաձուլության մի շարք նոր պրոցեսներ։

Օրգանական քիմիայի, այդ թվում ածխաջրածինների քիմիայի բնագավառում ձեռք բերված նվաճումների շնորհիվ ստեղծվել են նավթի ու բնական գազի վերամշակման նոր տեխնոլոգիական պրոցեսներ։

Վերջին ժամանակներս ինտենսիվորեն զարգանում են կենսաբանական գիտությունները։ Պարզվել է կենսաբանորեն կարևոր մի շարք սպիտակուցային նյութերի՝ որոշ ֆերմենտների, հորմոնների, նեյրոտոքսինների սկզբնային և տարածական լրիվ կառուցվածքը։ Լայն զարգացում են ստացել ֆերմենտների ազդեցության մեխանիզմի բնագավառի, նուկլեինաթթուների քիմիայի ու կենսասինթեզի բնագավառի հետազոտությունները։ Սովետական գիտնականներին է պատկանում առաջնությունը թաղանթաակտիվ միացությունների և բջիջների մեջ նյութերի ու իոնների տեղափոխման մեխանիզմի ուսումնասիրության բնագավառում։

Մի շարք խոշոր արդյունքներ են ստացվել երկրագիտության բնագավառում։ Վերջին ժամանակներս լայն զարգացում են ստացել երկրագնդի ընդերքի ուսումնասիրության երկրաֆիզիկական մեթոդները, որոնք երկրաբանական ու երկրաքիմիական հետազոտությունների զուգորդությամբ հնարավորություն տվեցին նոր տվյալներ ստանալ երկրագնդի խորքային գոտիների ու վերին մանտիայի բաղադրության ու կառուցվածքի վերաբերյալ, ընդլայնեցին ու խորացրին մեր գիտելիքները մոլորակի երկրաբանական պատմության վերաբերյալ։ Դա հնարավորություն ընձեռեց գիտական հիմք ստեղծել որոնողական-հետախուզական աշխատանքների պլանաչափ զարգացման համար։

Մեծ կոմպլեքսի աշխատանքներ են տարվում համաշխարհային օվկիանոսի և մթնոլորտի ուսումնասիրության ուղղությամբ։ Այդ հետազոտությունների շնորհիվ պետք է բարելավվի հսկայական ընդլայնյա հարստությունների օգտագործումը, որոնց նշանակությունը մարդկության կյանքում արագորեն աճում է, ինչպես նաև կկատարելագործվեն եղանակի երկարաժամկետ կանխատեսումները։

Սովետական Միությունը, շարունակեց հռետորը, դրեց տիեզերքի նվաճման, տիեզերական տարածության յուրացման սկիզբը, մարմնավորելով Ցիոլկովսկու գաղափարները։ Մեր երկիրը իրականացրեց երկրագնդի առաջին արհեստական արբանյակի արձակումը, երկրաշուրջ ուղեծրով մարդու առաջին թռիչքը և մարդու առաջին ելքը տիեզերական բաց տարածություն։ Հիմ-

նարար քայլեր արվեցին տիեզերական ավտոմատների օգնությամբ Լուսնի և մերձամոր մոլորակների հետազոտության ուղղությամբ։ Մեր տիեզերական տեխնիկայի կատարելությունը ցուցադրվեց «Սոյուզ-Ապոլոն» համատեղ թռիչքի ժամանակ։ Սովետական Միության գիտության ու արդյունաբերության այս նվաճումները կապված են մեր երկրի մի շարք ականավոր գիտնականների և, ամենից առաջ, ակադեմիկոս Կորոլյովի գործունեության հետ։

Տիեզերական հետազոտությունները արդեն հնարավորություն են տվել ստեղծելու հեռուստատեսային հեռավոր կապի գծեր, բարելավելու օդերևութաբանական ծառայությունը։

Հետագա զարգացում են ստացել հասարակական գիտությունները։ Դրանք վիթխարի դեր են խաղում սովետական մարդկանց մարքս-լենինյան աշխարհայացքի կազմավորման, մեր հասարակության կուլտուրայի զարգացման գործում։ Վերջին ժամանակներս նկատելիորեն ակտիվացել են տնտեսագիտության բնագավառի հետազոտությունները։ Հսկայական նշանակություն ունեցավ սովետական տնտեսագետների կողմից այն գիտական նյութերի նախապատրաստումը, որոնք կապված են մեր ժամանակներում կատարվող գիտատեխնիկական հեղաշրջման պրոբլեմների, սոցիալիստական արտադրության արդյունավետության բարձրացման և տեխնիկական առաջադիմության արագացման պրոբլեմների հետ, ինչպես նաև տասներորդ հնգամյա պլանի և երկարաժամկետ հեռանկարի մշակման հետ։

Սովետական գիտնականների հետազոտություններով խոշոր ավանդ է ներդրվել համաշխարհային սոցիալիստական սիստեմի հրատապ պրոբլեմների, կապիտալիստական երկրների և ինքնուրույն զարգացման ուղին թևակոխած երկրների սոցիալ-տնտեսական ժամանակակից զարգացման պրոբլեմների ուսումնասիրության ու մշակման գործում։

Ակադեմիայի գիտնականները պատրաստել են փիլիսոփայության պատմության մի շարք ընդհանրացնող աշխատություններ, մշակվում են սոցիալիստական դեմոկրատիայի ընդլայնման և սոցիալիստական օրինականության հետագա ամրապնդման հետ առնչված ֆունդամենտալ պրոբլեմներ։

Պատմաբանների գիտական հետազոտությունների գլխավոր ուղղություններն են սոցիալիստական շինարարության պատմությունը, ՍՄԿԿ-ի փորձի ընդհանրացումը, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության պատմությունը, 1941—1945 թվականների Հայրենական մեծ պատերազմի պատմությունը, ՍՍՀ Միության կազմավորման ու զարգացման պատմությունը և հայրենական ու համաշխարհային պատմության ինչպես ժամանակակից, այնպես էլ դարերի խորքը հասնող բազմաթիվ այլ պրոբլեմներ։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն, այնուհետև ասաց զեկուցողը, 1973 թվականի հոկտեմբերին «ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյակի հոբելյանի մասին» որոշման մեջ բարձր գնահատական տվեց մեր գիտությանը։ Ընդունելով այդ բարձր գնահատականը, մենք պարզորոշ գիտակցում ենք, որ դեռ ամեն ինչ չի արված գիտության կազմակերպումը կատարելագործելու, նրա արդյունավետությունը բարձրացնելու համար։

Վ. Ա. Կոտելնիկովը հավաստիացրեց, որ գիտությունների ակադեմիան, կատարելով կուսակցության XXIV համագումարի որոշումները, այսուհետև ևս լայն ճակատով կզարգացնի բնական և հասարակական ֆունդամենտալ գիտությունները, միջոցներ կձեռնարկի, որպեսզի ֆունդամենտալ աշխա-

տանքների արդյունքները ավելի արագ օգտագործվեն կիրառական հետազոտությունների մեջ, ավելի արագ արմատավորվեն պրակտիկայում, կնպաստի գիտնականների աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, գիտական հիմնարկությունները նորագույն գործիքներով ու սարքավորումներով հանդերձավորելու աշխատանքի բարելավմանը, այդ հիմնարկություններում ավտոմատիկայի և ժամանակակից հաշվողական տեխնիկայի միջոցների լայն արմատավորմանը։

Համաշխարհային գիտության առաջընթացի կարևոր գործոնը տարբեր երկրների գիտնականների ստեղծագործական հաղորդակցումն է, ընդգծեց հոնորը։ Այդպիսի հաղորդակցման արդյունավետությունը հաստատվում է մեր ակադեմիայի ամբողջ պատմությամբ։ Նրա միջազգային կապերը իր հիմնադրման օրվանից մինչև մեր օրերը զարգացել են, ամրապնդվել և այժմ հասել մեծ մասշտաբների։ Գիտությունների ակադեմիան գիտության ամենատարբեր բնագավառներում գիտական համագործակցության մեջ է 108 պետությունների գիտնականների հետ, ակտիվորեն մասնակցում է միջազգային գիտական ծրագրերով կատարվող աշխատանքներին։ Մենք առավել լայն գիտական կապեր ենք հաստատել եղբայրական սոցիալիստական երկրների գիտնականների հետ։ Գիտական համագործակցության զարգացման համար առանձնապես բարենպաստ պայմաններ են ստեղծված այժմ, երբ ՍՄԿԿ-ի, սովետական պետության, մյուս խաղաղասեր երկրների նպատակասլաց խաղաղասեր բաղաքականության շնորհիվ տեղի է ունենում միջազգային լարվածության թուլացման բարերար պրոցեսը։

Ակադեմիայի գիտնականները եղել են խաղաղության շարժման նախաձեռնողների թվում։ Նրանք շատ երկրների առաջադեմ գիտնականների հետ համատեղ լայնորեն մասնակցում են խաղաղության համաշխարհային խորհրդի գործունեությանը և խաղաղության ու ժողովուրդների անվտանգության օգտին, լարվածության թուլացման օգտին հանդես եկող մյուս միջազգային կազմակերպությունների գործունեությանը, մասնակցում են Պագուոշյան շարժմանը։

Մեր ժամանակներում, վերջում ասաց Վ. Ա. Կոտելնիկովը, հասարակության կյանքում անչափ աճել է գիտության նշանակությունը և, անտարակույս, էլ ավելի կաճի ապագայում։ Գիտական միտքը էլ ավելի առաջ կգնա շրջակա միջավայրի ճանաչողության ուղիով։ «Մարդկային խելքը բնության մեջ հայտնագործել է բազմաթիվ զարմանալի բաներ և էլ ավելի շատ կհայտնաբերի, դրանով իսկ մեծացնելով իր իշխանությունը նրա վրա...»,—գրել է Վլադիմիր Իլյիչ Լենինը։ Գիտության առաջընթացը օբյեկտիվ նախադրյալներ է ստեղծում կոմունիզմի գիտատեխնիկական բազայի հաջող զարգացման համար, կոմունիստական հասարակարգի կառուցման, ամենավսեմ, մարդասիրական իդեալների կենսագործման համար։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնակատարը ակադեմիայի հանձնարարությամբ սովետական ժողովրդին, կոմունիստական կուսակցության լենինյան Կենտրոնական կոմիտեին և սովետական կառավարությանը մեկ անգամ ևս հավաստիացրեց, որ ակադեմիայի գիտնականներն ու աշխատակիցները իրենց բոլոր ուժերը, գիտելիքները և ընդունակությունները կգործադրեն կուսակցության XXIV համագումարի կողմից սովետական ժողովրդի առջև դրված պատասխանատու խնդիրները և այն մեծ խնդիրները

կատարելու համար, որ կսահմանի XXV համագումարը։ Նրանք այսուհետև ևս արժանավայել ավանդ կներդնեն մեր երկրում կոմունիզմի կառուցման գործում, ամբողջ մոլորակի խաղաղության ու առաջադիմության գործում։

Վ. Ա. Կոտելնիկովի զեկուցումը բազմիցս ընդհատվում էր ծափահարություններով։

* * *

Սովետների երկրի բանվոր դասակարգի անունից սովետական գիտնականներին ողջունեց Մոսկվայի «Սերպ ի մոլոտ» գործարանի ձուլագործ, սոցիալիստական աշխատանքի հերոս Վ. Վ. Պլյուսը, կոլտնտեսային գյուղացիության անունից՝ Կուրսկի մարզի «Ստրանա սովետով» կոլտնտեսության կոմբայնավար, սոցիալիստական աշխատանքի հերոս Ի. Ի. Դուշինը, մտավորականության անունից՝ Մոսկվայի 52-րդ դպրոցի ուսուցչուհի Մ. Պ. Դեմիդովան։

Նրանք խոսեցին այն մասին, որ սովետական ժողովուրդը իրավամբ հպարտանում է իր ակադեմիայով, որը բազմաթիվ վառ էջեր է գրել հայրենական ու համաշխարհային գիտական մտքի տարեգրության մեջ, վստահություն էին հայտնում, որ ակադեմիան, սովետական գիտության բոլոր աշխատողները ՍՄԿԿ XXV համագումարը կդիմավորեն ստեղծագործական նոր հաջողություններով, արժանավայել ավանդ կներդնեն կոմունիստական շինարարության գործում։ Հռետորները կոմունիստական կուսակցությանը, սովետական պետությանը, անձամբ ընկեր Լ. Ի. Բրեժնևին ջերմագին շնորհակալություն էին հայտնում սովետական գիտության զարգացման՝ սոցիալական առաջադիմության այդ կարևոր գործոնի նկատմամբ ցուցաբերվող մշտական հոգատարության համար։

Այնուհետև ելույթ ունեցավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Գ. Կ. Սկրյաբինը և հաղորդեց, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հասցեով ստացվել են բազմաթիվ ողջույններ։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյակին նվիրված հանդիսավոր հոբելյանական նիստի մասնակիցները հսկայական ոգևորությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ հասցեագրված ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին։

(ՏԱՍՍ)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ, ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ

Նշանակալից տարեթվին՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հիմնադրման 250-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի մասնակիցները սովետական բոլոր գիտնականների անունից ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, սովետական կառավարությանը խորին շնորհակալություն են հայտնում կոմունիստական շինարարության գործում գիտությունների ակադեմիայի, ամբողջ սովետական գիտության դերի բարձր գնահատականի համար։